


Աղբյուր. նկարները արված են Խորհրդատուի կողմից դաշտային այցելությունների ժամանակ

# ՀԱՅԱՍՏԱՆ - ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

## Շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատում ջրամբարների ծրագրի համար

## ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ

**Rev03**

**Փետրվար 2026**

Մշակված է

*Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի*

*և*

*ՀՀ Տարածքային Կառավարման և Ենթակառուցվածքների Նախարարության Ջրային Կոմիտեի* համար

ATMS Solutions

www.atms.am

## Պատասխանատվության շրջանակը

Սույն Բնապահպանական և Սոցիալական Միջոցառումների Պլանը (ԲՍՄՊ) մշակվել է որպես Ջրամբարների կառուցման Ծրագրի (այսուհետ՝ «Ծրագիր») շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատման (ՇՄՍԱԳ) գործընթացի մաս: Այն ուրվագծում է Ծրագրի համար անհրաժեշտ միջոցառումները՝ ՎԶԵԲ-ի իրագործման պահանջներին համապատասխանելու համար:

Առաջարկվող մեղմացնող միջոցառումների, մշտադիտարկման գործողությունների և շահագրգիռ կողմերի ներգրավման ռազմավարությունների իրականացման պատասխանատվությունը կրում են բացառապես Ծրագրի պատվիրատուն և նրա կապալառուները: Սույն փաստաթղթի ցանկացած օգտագործում երրորդ կողմերի կողմից կատարվում է նրանց սեփական ռիսկով, և Խորհրդատուն պատասխանատվություն չի կրում նման օգտագործումից բխող որևէ հետևանքի համար:

# Հապավումների ցանկ

| | |
|---|---|
| ՏԲՍՀ | - Տարեկան Բնապահպանական և Սոցիալական Հաշվետվություն |
| ԿՄՊ | - Կենսաբազմազանության Միջոցառումների Պլան |
| ԿԿՊ | - Կենսաբազմազանության Կառավարման Պլան |
| ԿՓԿՊ | - Կենսաբազմազանության Փոխհատուցման Կառավարման Պլան |
| ԿԲՍԿՊ | - Կառուցման աշխատանքների Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Պլան |
| ԿԿ | - Կրիտիկական Կենսամիջավայր |
| ՓԲԸ | - Բակ Բաժնետիրական Ընկերություն |
| ՎԶԵԲ | - Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ |
| ՇՄԱԳ | - Շրջակա Միջավայրի վրա Ազդեցության Գնահատում |
| ԱԻՊԱՊ | - Արտակարգ Իրավիճակների Պատրաստվածության և Արձագանքման Պլան |
| ԲՍՄՊ | - Բնապահպանական և Սոցիալական Միջոցառումների Պլան |
| ՇՄՍԱԳ | - Շրջակա Միջավայրի վրա և Սոցիալական Ազդեցության Գնահատում |
| ԲՍԱԱ | - Բնապահպանական, Սոցիալական, Առողջապահական և Անվտանգության |
| ԲՍՄՊ | - Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Պլան |
| ԲՍՄՊ | - Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Համակարգ |
| ԲՍՔ | - Բնապահպանական և Սոցիալական Քաղաքականություն |
| ԵՄ | - Եվրոպական Միություն |
| ԲևՍ | - Բնապահպանական և Սոցիալական |
| ԳԲՌ | - Գենդերային Բռնություն և Ոտնձգություն |
| ՋԳ | - Ջերմոցային Գազեր |
| ԼԳՈւ | - Լավագույն Գործելակերպի Ուղեցույց |
| ՄՌ | - Մարդկային Ռեսուրսներ |
| ԱԿՊ | - Աշխատանքի Կառավարման Պլան |
| ՇՄՆ | - Շրջակա Միջավայրի Նախարարություն |
| ՏԿԵՆ | - Տարածքային Կառավարման և Ենթակառուցվածքների Նախարարություն |
| ԱԱևԱՊ | - Աշխատանքի Անվտանգություն և Առողջության Պահպանություն |
| ԱԱԱՊԿՊ | - Աշխատանքի Անվտանգություն և Առողջության Պահպանության Կառավարման Պլան |
| ՀՀԿ | - Հայաստանի Հանրապետության Կառավարություն |
| ԾԱԵԱ | - Ծրագրի Ազդեցության Ենթարկված Անձ |
| ԱԿՀ | - Առաջնահերթ Կենսաբազմազանության Հատկանիշներ |
| ԾԻԱ | - Ծրագրի Իրականացման Աջակցություն |
| ԾԻԳ | - Ծրագրի Իրականացման Գործակալություն |
| ԻՊ | - Իրագործման Պահանջ |
| ՀՀ | - Հայաստանի Հանրապետություն |
| ԱԿԿՊ | - Արտահոսքերի Կանխարգելման և Կառավարման Պլան |
| ՏԲԲՍԿՊ | - Տարածքին Բնորոշ Բնապահպանական և Սոցիալական Կառավարման և Մշտադիտարկման Պլան |
| ՏԱ | - Տեխնիկական Առաջադրանք |
| ՋԿ | - Ջրային Կոմիտե |
| ԹԿՊ | - Թափոնների Կառավարման Պլան |
| ՄՖԿ | - Միջազգային Ֆինանսական Կազմակերպություն |

## Ծրագրի նախապատմությունը

Եվրոպական Միության (ԵՄ) «Վերականգնում, դիմակայունություն և բարեփոխումներ. Արևելյան գործընկերության գերակայությունները 2020 թվականից հետո» նախաձեռնության շրջանակներում ՀՀ կառավարությունը նախատեսում է կառուցել 17 ջրամբար, ինչը ուղղված է երկրում ջրային և պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանը: Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը (ՎԶԵԲ կամ Բանկ) դիտարկում է ՀՀ կառավարությանը վարկ տրամադրելու հնարավորությունը՝ Հայաստանի տարբեր մարզերում հինգ ջրամբարների կառուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ֆինանսավորելու համար: Դրանք են՝

- Քասախի ջրամբար Արագածոտնի մարզում[1],
- Լիճքի ջրամբար Սյունիքի մարզում,
- Ելփինի ջրամբար Վայոց ձորի մարզում,
- Արթիկի ջրամբար Շիրակի մարզում,
- Աստղաձորի ջրամբար Գեղարքունիքի մարզում:

Ծրագրի ջրամբարների տեղադրությունները ներկայացված են **Նկար 1**-ում:

**Նկար 1. Ծրագրի ջրամբարների քարտեզ**




ՎԶԵԲ-ը այս Ծրագիրը դասակարգել է որպես «Ա» կատեգորիայի՝ համաձայն իր Բնապահպանական և Սոցիալական Քաղաքականության (ԲՍՔ, 2019), քանի որ այն կարող է ունենալ զգալի բնապահպանական և սոցիալական ազդեցություններ: Սա նշանակում է, որ պետք է մշակվի Շրջակա Միջավայրի վրա և Սոցիալական Ազդեցության Գնահատման (ՇՄՍԱԳ) համապարփակ հաշվետվություն և դրան կից փաստաթղթեր, որին հաջորդելու է դրանց առնվազն 120 օրյա հանրային հրապարակումը: Սույն Բնապահպանական և Սոցիալական Միջոցառումների Պլանը (ԲՍՄՊ) մշակվել է Խորհրդատուի[2] կողմից՝ որպես Ծրագրի ՇՄՍԱԳ փաթեթի մաս:

[1] «Մարզ» հայերենով նշանակում է շրջան
[2] ATMS Solutions (Հայաստան) և Ecoline International (Բուլղարիա) ընկերություններից բաղկացած կոնսորցիում

ԲՍՄՊ-ը (**Աղյուսակ 1**) համապարփակ փաստաթուղթ է, որը նկարագրում է այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ են Ծրագրի իրականացումը ՎԶԵԲ-ի Իրագործման Պահանջների (ԻՊ), Հայաստանի ազգային օրենսդրության և Լավագույն Միջազգային Գործելակերպերի (ԼՄԳ) պահանջներին համապատասխանեցնելու համար:

ՀՀ Տարածքային Կառավարման և Ենթակառուցվածքների Նախարարության (ՏԶԵՆ) Ջրային Կոմիտեն («ՋԿ» կամ «Պատվիրատու») պատասխանատու է Ծրագրի գործունեությունների և ԲՍՄՊ-ի իրականացման համար՝ ՏԿԵՆ-ի անունից:

## Նպատակը և շրջանակը

ԲՍՄՊ-ն առանձին փաստաթուղթ է, որը կապված է Ծրագրի ՇՄՍԱԳ հաշվետվության հետ: Այն ուրվագծում է Ծրագրի անհրաժեշտ միջոցառումները, գործողությունները և բարելավումները՝ ՎԶԵԲ-ի ԲՍՔ (2019) և դրա ԻՊ-ների հետ համապատասխանությանը հասնելու համար: Այն շրջակա միջավայրի և սոցիալական գնահատման արդյունքները վերածում է գործնական պարտավորությունների ամբողջության, որը լուծում է նույնականացված ռիսկերը, ազդեցությունները և բացթողումները: ԲՍՄՊ-ը ծառայում է որպես պարտավորեցնող համաձայնագիր Պատվիրատուի և ՎԶԵԲ-ի միջև՝ ապահովելու, որ Ծրագիրը իրականացվի և շահագործվի լավագույն միջազգային գործելակերպին համապատասխան:

ԲՍՄՊ-ը ներառում է բոլոր անհրաժեշտ գործողությունները՝ Ծրագիրը համապատասխանեցնելու համար գործող ազգային օրենսդրությանը և ՎԶԵԲ-ի ԻՊ-ներին Ծրագրի ողջ կենսացիկլի ընթացքում, ներառյալ նախագծումը, պլանավորումը, շինարարությունը, շահագործումը և, որտեղ դա նպատակահարմար է, շահագործումից հանումը: Դրա շրջանակը սովորաբար ներառում է հետևյալ բաղադրիչները.

- Բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգեր և գործառնական վերահսկում,
- Ռեսուրսների արդյունավետություն և աղտոտման կանխարգելում,
- Առողջություն և աշխատանքի պաշտպանություն,
- Աշխատանք և աշխատանքային պայմաններ,
- Հանրային առողջություն, աշխատանքի պաշտպանություն և անվտանգություն,
- Հողերի օտարում և հարկադիր տեղահանում (եթե կիրառելի է),
- Կենսաբազմազանության պահպանում և բնական ռեսուրսների կայուն կառավարում,
- Մշակութային ժառանգության պահպանություն,
- Շահառուների ներգրավում, տեղեկատվության հրապարակում և բողոքների կառավարում:

ԲՍՄՊ-ի շրջանակը ներառում է Ծրագրի բոլոր հինգ տեղանքները, մասնավորապես՝ Արթիկի, Աստղաձորի, Քասախի, Լիճքի և Ելփինի ջրամբարները: Եթե այլ բան նշված չէ, ԲՍՄՊ-ում նշված բոլոր գործողությունները նախատեսված են իրականացնելու Ծրագրում ներառված յուրաքանչյուր ջրամբարում:

Այնուամենայնիվ, ընդունվում է, որ որոշակի գործողություններ կարող են լինել տեղանքին բնորոշ՝ ջրամբարի պայմանների, նախագծային առանձնահատկությունների, շրջակա միջավայրի զգայունության կամ շահագործման համատեքստերի տարբերությունների պատճառով: Նման դեպքերում, երբ գործողությունը կիրառելի չէ բոլոր ջրամբարների համար, դա հստակ նշվում է ԲՍՄՊ-ի աղյուսակի «Կարգավիճակ/Նշումներ» սյունակում՝ համապատասխան բացատրության կամ հիմնավորման հետ միասին:

# Բնապահպանական և Սոցիալական Միջոցառումների Պլան

***Նշում՝***

*ԲՍՄՊ-ի շրջանակը ներառում է Ծրագրի բոլոր հինգ տեղանքները, մասնավորապես՝ Արթիկի, Աստղաձորի, Քասախի, Լիճքի և Ելփինի ջրամբարները: Եթե այլ բան նշված չէ, ԲՍՄՊ-ում նշված բոլոր գործողությունները նախատեսված են իրականացնելու Ծրագրում ներառված յուրաքանչյուր ջրամբարում:*

*Այնուամենայնիվ, ընդունվում է, որ որոշակի գործողություններ կարող են լինել տեղանքին բնորոշ՝ ջրամբարի պայմանների, նախագծային առանձնահատկությունների, շրջակա միջավայրի զգայունության կամ շահագործման համատեքստերի տարբերությունների պատճառով: Նման դեպքերում, երբ գործողությունը կիրառելի չէ բոլոր ջրամբարների համար, դա հստակ նշվում է ԲՍՄՊ-ի աղյուսակի «Կարգավիճակ/Նշումներ» սյունակում՝ համապատասխան բացատրության կամ հիմնավորման հետ միասին:*

| № | Միջոցառում | Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություն/ օգուտներ) | Պահանջներ (իրավական, ՎԶԵԲ ԲՍՊ, լավագույն փորձ) | Ռեսուրսներ, ներդրումներ, պատաս-խանատվություն | Ժամկետներ[3] | Թիրախ և հաջող իրականացման գնահատման և չափանիշ | Կարգավիճակ/ նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| **ԻՊ1** | **Բնապահպանական և սոցիալական ռիսկերի ու ազդեցությունների գնահատում և կառավարում** | | | | | | |
| 1.1 | Հիմնել Ծրագրի Իրականացման Թիմ (ԾԻԹ) կամ Կառույց ՏԿԵՆ-ի Ջրային Կոմիտեի ներքո:<br>ԾԻԹ-ը կամ Կառույցը պետք է ունենա որակավորված ԲևՍ անձնակազմ, որն ունի ՄՖԿ ծրագրերի ոլորտում մեծ փորձառություն և օժտված լինի բնապահպանական, սոցիալական, առողջապահական և անվտանգության (ԲՍԱԱ) մշտադիտարկման և հսկողության դերերով ու պարտականություններով, և պետք է ապահովված լինի այդ գործառույթները կատարելու համար անհրաժեշտ տեխնիկական ռեսուրսներով (առնվազն չորս մասնագետ՝ բնապահպանական և | Համապատասխանու-թյուն ՎԶԵԲ-ի ԻՊ-ներին և ազգային ԲևՍ պահանջներին:<br>Ծրագրի կանոնավոր ԲևՍ մշտադիտարկում: | ՎԶԵԲ ԻՊ1՝ Կազմակերպա-կան կարողու-թյուններ և պար-տավորություն: | ԾԻԹ կամ կառույցի բյուջե:<br>ՋԿ և ՏԿԵՆ: | Շինարարական աշխատանքների մեկնարկից առնվազն 6 ամիս առաջ: | Հիմնադրված, տեխնիկապես հագեցած և որակյալ ԲԲևՍ փորձագետներով համալրված ԾԻԹ-ը կամ կառույց: | |

[3]Մ - մշակում, Ի - իրականացում, Հ - հաստատում

| № | Միջոցառում | Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություն/ օգուտներ) | Պահանջներ (իրավական, ՎԶԵԲ ԲՍՊ, լավագույն փորձ) | Ռեսուրսներ, ներդրումներ, պատաս-խանատվություն | Ժամկետներ[3] | Թիրախ և հաջող իրականացման գնահատման և չափանիշ2 | Կարգավիճակ/ Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | առողջապահական և անվտանգության մասնագետ, սոցիալական հարցերով մասնագետ մարդկային ռեսուրսների և աշխատանքի պայմանների փորձով, տարաբնակեցման մասնագետ և շահառուների ներգրավման մասնագետ): | | | | | | |
| 1.2 | Մրցութային մասնագրերում և պայմանագրային փաստաթղթերում ներառել նախագծման և կառուցման կապալառուի համար պահանջ ունենալ Ծրագրի իրականացման բավարար մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներ, ինչպես նաև նախահաշիվ՝ ազգային և միջազգային ԲԱՍ պահանջների վերաբերյալ բավարար գիտելիքներով և շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման, կենսաբազմազանության, մշակութային ժառանգության, ինչպես նաև աշխատանքի պաշտպանության և համայնքային առողջության և անվտանգության ոլորտում դերերով՝ համապատասխանող աշխատողների թվին: | Կիրառելի ԲԱՍ պահանջներին համապատասխան Ծրագրի իրականացման ընդլայնված կարողություն: | ՎԶԵԲ ԻՊ1՝ Կազմակերպա-կան կարողու-թյուններ և պար-տավորություն: | ՀՀ ՋԿ (ԾԻԹ կամ Կառույց) Բանկի կողմից ԲՍՄՊ-ի իրականացման աջակցման համար ներգրավված խորհրդատուի օգնությամբ: | Գնումների փուլում և նախագծման և կառուցման կապալառուի հետ պայմանագիր կնքելուց հետո: | Նախագծման և կառուցման կապալառուի թիմը համալրված է կոմպետենտ և բավարար թվով ԲԱՍ մասնագետներով: | |
| | Ապահովել, որ վերահսկող ինժեների թիմն ունենա բավարար որակավորված | | | | Վերահսկող ինժեների հետ պայմանագիր կնքելուց հետո: | Վերահսկող ինժեները համալրված է կոմպետենտ և բավարար | |

| № | Միջոցառում | Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություն/ օգուտներ) | Պահանջներ (իրավական, ՎԶԵԲ ԲՍՊ, լավագույն փորձ) | Ռեսուրսներ, ներդրումներ, պատաս-խանատվություն | Ժամկետներ[3] | Թիրախ և հաջող իրականացման գնահատման և չափանիշ2 | Կարգավիճակ/ նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | անձնակազմ նախագծի իրականացումը վերահսկելու համար և անհրաժեշտ փորձագիտություն ազգային և միջազգային ԲևՍ պահանջների ոլորտում՝ հստակորեն բաշխված դերերով շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման, տարաբնակեցման, կենսաբազմազանության, մշակութային ժառանգության, ինչպես նաև համայնքային առողջության և աշխատանքի անվտանգության համար՝ համապատասխանող աշխատուժի չափին: | | | | | թվով ԲևՍ մասնագետներով: | |
| 1.3 | Մշակել և ներդնել Ծրագրի բնա-պահպանական, սոցիալական, առողջապահական և աշխատանքի պաշտպանության կառավարման համակարգը (ԲՍԿՀ) ջրամբարների կառուցման և շահագործման փուլերի համար, որը առնվազն կներառի ՀՀ ՋԿ-ի (և ԾԻԹ-ի կամ Կառույցի), նախագծման և կառուցման կապալառուի (և դրա ենթակապալառուների) և Ջրառ ՓԲԸ-ի գործունեություն-ները[4], ներառյալ՝<br>• Բնապահպանական, Սոցիալական, Առողջության և Անվտանգության (ԲՍԱԱ) | Ծրագրի ԲՍԱԱ գործունեության բարելավված կառավարում:<br>Ծրագրի ԲՍԱԱ արդյունավետության շարունակական բարելավում: | ՎԶԵԲ ԻՊ1՝ Բնա-պահպանական և սոցիալական համակարգեր և Բնապահպանա-կան և սոցիալա-կան քաղաքակա-նություն,<br>ISO 14001 և ISO 45001 ստան-դարտներ *(ինչպես սահմանված է 1.3 կետի 1-ին սյան ստորին հատվածում)*: | ՀՀ ՋԿ (ԾԻԹ կամ Կառույց) Բանկի կողմից ԲՍՄՊ-ի իրականացման աջակցման համար ներգրավված խորհրդատուի օգնությամբ: | Մ՝ Շինարարական աշխատանքների մեկնարկից առաջ:<br>Ի՝ Սկսած նախագծման և կառուցման կապալառուի մոբիլիզացիայից և շահագործման ողջ փուլի ընթացքում: | ԲՍԿՀ-ը մշակված է, ներդրված և արդյունավետ գործում է: | |

[4]1-ին և 2-րդ կատեգորիայի ջրամբարների օպերատոր

| № | Միջոցառում | Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություն/ օգուտներ) | Պահանջներ (իրավական, ՎԶԵԲ ԲՍՊ, լավագույն փորձ) | Ռեսուրսներ, ներդրումներ, պատաս-խանատվություն | Ժամկետներ[3] | Թիրախ և հաջող իրականացման գնահատման և չափանիշ2 | Կարգավիճակ/ Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | գծով քաղաքականություն և նպատակներ,<br>• Կազմակերպչական կառուցվածք, դերեր և պարտականություններ,<br>• Կապալառուի և մատակա-րարի կառավարման ընթացակարգ (նրանց ԲԱՍ և աշխատանքի անվտանգության արդյունավետությունը կառավարելու համար),<br>• Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Պլաններ (ԲՍԿՊ) Ծրագրի ջրամբարների համար,<br>• ԲԱՍ արդյունավետության մշտադիտարկման և հաշվետվությունների շրջանակ (ներառյալ ԲՍԿՊ-ի ԲԱՍ մշտադիտարկման պլանը),<br>• Անհամապատասխանու-թյունների, բողոքների և միջադեպերի լուծման ընթացակարգեր,<br>• Փոփոխությունների կառավարման ընթացակարգ՝ ապահովելու համար, որ Ծրագրի նախագծային ցանկացած փոփոխություն (տարրողություն, տեղանք, տեխնոլոգիա) ենթակա է ԲԱՍ գնահատման՝ համապատասխան | | | | | | |

| № | Միջոցառում | Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություն/ օգուտներ) | Պահանջներ (իրավական, ՎԶԵԲ ԲՍՊ, լավագույն փորձ) | Ռեսուրսներ, ներդրումներ, պատաս-խանատվություն | Ժամկետներ[3] | Թիրախ և հաջող իրականացման գնահատման և չափանիշ2 | Կարգավիճակ/ նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ռիսկերին: Նոր և փոփոխված կամ նոր ի հայտ եկած ազդեցությունները պետք է գնահատվեն և մեղմացվեն սահմանված նշանակալիության շեմին և ՎԶԵԲ-ի ԻՊ-ներին համապատասխան: Ցանկացած էական փոփոխություն պետք է ներկայացվի և համաձայնեցվի Բանկի հետ՝ իրականացումից առաջ,<br>• Շահառուների Ներգրավման Պլան (ՇՆՊ) Ծրագրի բողոքարկման մեխանիզմով:<br>*Որպես չափանիշ, կարող են կիրառվել ISO 14001 և ISO 45001 ստանդարտների սկզբունքներն ու տարրերը, սակայն պաշտոնական հավաստագրում պարտադիր չէ:* | | | | | | |
| 1.4 | Ապահովել, որ բոլոր ենթակապալառուները տեղյակ են Ծրագրի համապատասխան ԲԱՍ պարտավորությունների մասին, ինչպես նշված է ՇՄՍԱԳ-ներում, ԲՍԿՊ-ներում, սույն ԲՍՄՊ-ում և մրցույթի տեխնիկական մասնագրերում, և համապատասխանում են ՎԶԵԲ-ի կիրառելի ԲԱՍ պահանջներին, ինչպես նաև պատշաճ կերպով հետևում են նախագծման և կառուցման կապալառուի | Նախագծման և կառուցման կապալառուի և նրա ենթակապալառուների կողմից ԲԱՍ կառավարման հարցերի նկատմամբ համաձայնեցված մոտեցում:<br>ԲՍԱԱ կառավարման բարելավված համակարգ: | ՎԶԵԲ ԻՊ1՝ Երրորդ կողմի ռիսկ:<br>Ազգային պահանջներ: | ՀՀ ՋԿ (ԾԻԹ կամ Կառույց) ԲՍՄՊ-ի իրականացման աջակցման համար ներգրաված խորհրդատուի օգնությամբ և վարկատուների հիժեները՝ պայմանագրային կարգավորումները հաստատելու համար: | Գնումների փուլում և նախագծման և կառուցման կապալառուի հետ պայմանագիր կնքելուց առաջ:<br>Հատուկ ենթապայմանագրեր կնքելուց առաջ: | Հատուկ դրույթներ ներառված են նախագծման և կառուցման կապալառուի հետ կնքված պայմանագրում:<br>Հատուկ դրույթներ ներառված են բոլոր ենթակապալառուների պայմանագրերում: | |

| № | Միջոցառում | Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություն/ օգուտներ) | Պահանջներ (իրավական, ՎԶԵԲ ԲՍՊ, լավագույն փորձ) | Ռեսուրսներ, ներդրումներ, պատաս-խանատվություն | Ժամկետներ[3] | Թիրախ և հաջող իրականացման գնահատման և չափանիշ2 | Կարգավիճակ/ Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | կողմից մշակված Ծրագրի ԲՍԿՀ-ին և Տարածքին Բնորոշ Բնապահպանական և Սոցիալական Կառավարման և Մշտադիտարկման Պլանին (ՏԲԲՍԿՊ)՝ ներառյալ.<br>i) ՇՄՍԱԳ-ի, ԲՍԿՊ-ի, ՏՊ-ի, ԿԿՊ-ի, ԿՄՊ-ի և ԲՍՄՊ-ի համապատասխանության պահանջները մրցութային մասնագրերում,<br>ii) Նախագծման և կառուցման կապալառուի պայմանագրում հատուկ ԲԱՍ արդյունավետության կետերը: | | | Նախագծման և կառուցման կապալառու՝ ենթակապալառուների կողմից այս պահանջների կատարումը վերահսկելու համար: | | | |
| 1.5 | Մշակել, պաշտոնապես հաստատել և իրականացնել շինարարության փուլի տեղանքին բնորոշ ԲՍԿՊ-ները (ՏԲԲՍԿՊ[5])՝ համաձայն ՎԶԵԲ-ի ԻՊ-ների, ներառյալ, բայց չսահմանափակվելով.<br>• Երթևեկության կառավարման պլան,<br>• Բուսաշերտի կառավարման պլան,<br>• Քարհանքի կառավարման պլան,<br>• Հողային հանույթի կառավարման պլան,<br>• Վտանգավոր նյութերի | Ծրագրի շրջակա և սոցիալական միջավայրի վրա ազդեցության նվազագույնի հասցնելը և մեղմացնելը:<br>Աշխատանքային պայմանների բարելավում և համայնքային ու աշխատանքի անվտանգության ռիսկերի նվազագույնի հասցնելը: | ՎԶԵԲ ԻՊ1՝ Բնա-պահպանական և սոցիալական կառավարման պլան:<br>ՎԶԵԲ ԻՊ 1-6, 8, 10:<br>Ազգային ԲԱՍ պահանջներ:<br>ԼՄԳ: | Նախագծման և կառուցման կապալառուի բյուջեի շրջանակներում:<br>Նախագծման և կառուցման կապալառու՝ մշակում և իրականացնում է:<br>Վերահսկող ինժեները՝ հաստատում է:<br>Վերահսկող ինժեները և ՀՀ ՋԿ (ԾԻԹ կամ Կառույցը)՝ վերահսկում են: | Մ՝ Շինարարական աշխատանքների մեկնարկից առաջ:<br>Ի՝ Շինարարության մեկնարկից և շինարարության ողջ փուլի ընթացքում: | Շինարարության փուլի համար նախատեսված ՏԲԲՍԿՊ-ները մշակված են և արդյունավետորեն իրականացվում են: | |

[5]Առաջարկվող ՏԲԲՍԿՊ-ները կարող են տարբեր լինել՝ կախված Ծրագրի ջրամբարներից: Մանրամասների համար խնդրում ենք դիմել ՇՄՍԱԳ հաշվետվություններին և համապատասխան ԲՍԿՊ-ներին:

| № | Միջոցառում | Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություն/ օգուտներ) | Պահանջներ (իրավական, ՎԶԵԲ ԲՍՊ, լավագույն փորձ) | Ռեսուրսներ, ներդրումներ, պատաս-խանատվություն | Ժամկետներ[3] | Թիրախ և հաջող իրականացման գնահատման և չափանիշ2 | Կարգավիճակ/ Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | կառավարման պլան,<br>• Արտահոսքերի կանխարգելման և կառավարման պլան,<br>• Թափոնների կառավարման պլան,<br>• Աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման կառավարման պլան,<br>• Շինարարական ճամբարի կառավարման պլան, ներառյալ ճամբարի վարքագծի կանոնագիրքը և ճամբարի կառավարման ենթապլանները,<br>• Կենսաբազմազանության կառավարման պլան,<br>• Լցանյութերի արդյունահանման պլան,<br>• Պայթեցումների կառավարման պլան,<br>• Մշակութային ժառանգության կառավարման պլան,<br>• Պատահական գտածոների ընթացակարգ,<br>• Գետափնյա կենսամիջավայրերի կառուցման պլան,<br>• Օդի, ջրի և հողի որակի մշտադիտարկման պլան,<br>• Աղմուկի և թրթռման մշտադիտարկման պլան:<br>Թարմացնել ՏԲԲՍԿՊ-ները՝ | | | | | | |

| № | Միջոցառում | Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություն/ օգուտներ) | Պահանջներ (իրավական, ՎԶԵԲ ԲՍՊ, լավագույն փորձ) | Ռեսուրսներ, ներդրումներ, պատաս-խանատվություն | Ժամկետներ[3] | Թիրախ և հաջող իրականացման գնահատման և չափանիշ2 | Կարգավիճակ/ Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | հիմնվելով լրացուցիչ ԲևՍ գնահատականների, ուսումնասիրությունների, մշտադիտարկման արդյունքների և այլ տեղեկատվության վրա և համաձայնեցնել թարմացումները վերահսկող ինժեների, ՀՀ ՋԿ-ի (ԾԻԹ կամ Կառույց) և Բանկի հետ:<br>Նախագծող և կառուցող կապալառուն պետք է համապատասխանի Պատվիրատուի Շահառուների Ներգրավման Պլանի և Ծրագրի Տարաբնակեցման Պլանների (ՏՊ) սկզբունքներին: | | | | | | |
| 1.6 | Ջրառ ՓԲԸ կամ ջրամբարների շահագործման համար պատասխանատու ցանկացած այլ ընկերության հետ կնքված գործառնական պայմանագրերում ներառել ՎԶԵԲ-ի իրագործման պահանջներին համապատասխանության պարտադիր պահանջը, շահագործման փուլի համար նախատեսված ԲՍՄՊ-ի համապատասխան դրույթները և ջրամբարների շահագործման ողջ ընթացքում Կառավարման Պլանները:<br>Սահմանել և համաձայնեցնել Ջրառ ՓԲԸ և Ջրօգտագործողների | Ապահովել ջրամբարների օպերատորի համա-պատասխանությունը ազգային ԲևՍ պահանջներին և ԼՄԳ-երին:<br>ԲՍԱԱ ռիսկերի և վտանգների նվազեցում: | ՎԶԵԲ ԻՊ1՝ Բնա-պահպանական և սոցիալական կառավարման պլան:<br>Ազգային ԲևՍ պահանջներ:<br>ԼՄԳ: | Ջրային Կոմիտե:<br>Ջրառ ՓԲԸ՝ ջրամբարների օպերատոր: | Մինչև ջրամբարների շահագործման մեկնարկը: | Շահագործման փուլի համար ԲևՍ կառավարման պլաններն ու ընթացակարգերը մշակված և արդյունավետորեն ներդրված են: | |

| № | Միջոցառում | Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություն/ օգուտներ) | Պահանջներ (իրավական, ՎԶԵԲ ԲՍՊ, լավագույն փորձ) | Ռեսուրսներ, ներդրումներ, պատաս-խանատվություն | Ժամկետներ[3] | Թիրախ և հաջող իրականացման գնահատման և չափանիշ2 | Կարգավիճակ/ Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ընկերությունների հետ արդյունավետ ջրօգտագործման միջոցառումները, ներառյալ ջրաչափված ջրառը, սպառման սահմանաքանակները և հողագործների համար ֆինանսական խթանները՝ արդյունավետ և կայուն ոռոգման մեթոդներ կիրառելու համար:<br>Թարմացնել շինարարության համապատասխան ՏԲԲՍԿՊ-ները՝ ջրամբարի շահագործման փուլի ԲԱՍ պահանջները բավարարելու համար (միայն այն ՏԲԲՍԿՊ-ները, որոնք կմնան կիրառելի շահագործման փուլում):<br>Իրագործել թարմացված ԲԱՍ կառավարման պլաններն ու ընթացակարգերը, ներառյալ, բայց չսահմանափակվելով հետևյալով՝<br>• Ոռոգման ջրի և բնապահպանական հոսքի բացթողումների կառավարման պլան,<br>• Ջրամբարի շահագործման և սպասարկման պլան,<br>• Երթևեկության կառավարման պլան,<br>• Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան,<br>• Աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման | | | | | | |

| № | Միջոցառում | Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություն/ օգուտներ) | Պահանջներ (իրավական, ՎԶԵԲ ԲՍՊ, լավագույն փորձ) | Ռեսուրսներ, ներդրումներ, պատաս-խանատվություն | Ժամկետներ[3] | Թիրախ և հաջող իրականացման գնահատման և չափանիշ2 | Կարգավիճակ/ նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ընթացակարգ (Պլան),<br>• Թափոնների կառավարման պլան,<br>• Շահառուների կառավարման պլան,<br>• Կենսաբազմազանության միջոցառումների պլան: | | | | | | |
| 1.7 | Բանկի կողմից վարձված անկախ արտաքին սոցիալական և բնապահպանական խորհրդատուին տրամադրել մուտք դեպի տեղանքներ և Ծրագրի փաստաթղթեր՝ ՎԶԵԲ-ի բնապահպանական և սոցիալական պահանջներին, կառավարման պլաններին և ՏՊ-ներին համապատասխան Ծրագրի սոցիալական արդյունավետությունը գնահատելու և մշտադիտարկելու համար: | Համապատասխանու-թյուն Ծրագրի ԲևՍ պարտավորություն-ներին: | ՎԶԵԲ ԻՊ1՝ Ծրագրի մշտադի-տարկում և հաշ-վետվություններ:<br>ՎԶԵԲ-ի պահանջներ «Ա» կարգի ծրագրերի համար: | ՀՀ ՋԿ (ԾԻԹ և Կառույց) | Խորհրդատուները պետք է ներգրավվեն շինարարական աշխատանքների մեկնարկից առաջ:<br>Շինարարության փուլում և շահագործման առաջին երկու տարիների ընթացքում[6]: | Վարձվել են իրավասու խորհրդատուներ:<br>ԲևՍ արդյունավետության մշտադիտարկման հաշվետվությունները ներկայացվել են ՎԶԵԲ-ին և ՋԿ-ին: | Խորհրդատու-ների տեխնի-կական առա-ջադրանքները պետք է համա-ձայնեցվեն ՎԶԵԲ-ի հետ՝ ներգրավվելուց առաջ: |
| 1.8 | Ստանալ բոլոր անհրաժեշտ թույլտվությունները և հաստատումները համապատասխան պետական մարմիններից և ապահովել նրանց պայմաններին և պահանջներին շարունակական համապատասխանությունը, որը նվազագույնը ներառում է.<br>• Շինարարության թույլտվությունը, | Համապատասխանու-թյուն ազգային կարգավորող և թույլտվությունների շրջանակին:<br>Պետական բնապահպանական տեսչական մարմնի կողմից տուգանքների ռիսկ: | Ազգային բնա-պահպանական և սոցիալական օրենսդրության պահանջները: | Նախագծման և կառուցման կապալառու: | Ինչպես պահանջվում է ազգային կանոնակարգերով: | Բոլոր անհրաժեշտ թույլտվությունները ստացվել և գրանցվել են:<br>Ծրագրի շրջակա միջավայրի և սոցիալական հարցերի վերաբերյալ բոլոր համաձայնագրերը ստորագրվել և գրանցվել են: | |

[6]Մինչև ՎԶԵԲ-ի կողմից այլ բան չպահանջվի

| № | Միջոցառում | Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություն/ օգուտներ) | Պահանջներ (իրավական, ՎԶԵԲ ԲՍՊ, լավագույն փորձ) | Ռեսուրսներ, ներդրումներ, պատաս-խանատվություն | Ժամկետներ[3] | Թիրախ և հաջող իրականացման գնահատման և չափանիշ2 | Կարգավիճակ/ Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | • Պայթեցումների թույլտվությունները,<br>• Ջրամբարների շինանյութի համար լցանյութերի արդյունահանման թույլտվություն,<br>• Մթնոլորտային արտանետումների թույլտվություններ (եթե պահանջվում է),<br>• Ջրօգտագործման թույլտվություններ (եթե պահանջվում է),<br>• Վտանգավոր թափոնների անձնագրեր,<br>• Թափոնների գոյացման նորմատիվներ և դրանց տեղադրման սահմանաքանակներ,<br>• Թույլտվություններ/ համաձայնագրեր ազդակիր համայնքներից հողային հանույթի և հողի բերրի շերտի տեղադրման և քարհանքների և այլնի համար,<br>• Պայմանագրեր թափոնների հետ գործածության մասնագիտացված ընկերությունների հետ,<br>• ՏՊ-երի հաստատում: | | | | | | |
| 1.9 | Մշակել և իրականացնել շինարարության փուլի մշտադիտարկման ծրագիր՝ | Շինարարության փուլի համար սահմանված մեղմացնող | ՎԶԵԲ ԻՊ1՝ Ծրագրի մշտադի- | Նախագծման և կառուցման | Մ՝ Շինարարական աշխատանքների մեկնարկից առաջ: | Մշտադիտարկման ծրագիրը մշակվել և ներդրվել է: | |

| № | Միջոցառում | Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություն/ օգուտներ) | Պահանջներ (իրավական, ՎԶԵԲ ԲՍՊ, լավագույն փորձ) | Ռեսուրսներ, ներդրումներ, պատաս-խանատվություն | Ժամկետներ[3] | Թիրախ և հաջող իրականացման գնահատման և չափանիշ2 | Կարգավիճակ/ Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ԲԿՄՊ-երում և ՏԲԲՍԿՊ-ներում նշված ազգային և միջազգային պահանջներին համապատասխանությունն ապահովելու և նախագծման և կառուցման կապալառուի ԲԱՍ արդյունավետությունը ցուցադրելու համար: | միջոցառումների արդյունավետության գնահատում: | տարկում և հաշ-վետվություններ:<br>Ազգային պահանջներ: | կապալառու՝ մշակում է:<br>Վերահսկող ինժեներ՝ հաստատում է:<br>ՀՀ ՋԿ (ԾԻԹ կամ Կառույց)՝ առարկությունների բացակայություն: | Ի՝ շինարարության փուլի ընթացքում: | | |
| 1.10 | Մշակել և ՎԶԵԲ-ին ներկայացնել կիսամյակային ԲԱՍ հաշվետվություններ՝ ԲՍՄՊ-ի առաջընթացի և Ծրագրի ԲԱՍ արդյունավետության վերաբերյալ (շինարարության ընթացքում կամ մինչև ՎԶԵԲ-ի կողմից այլ հրահանգ ստանալը): | Ծրագրի ԲԱՍ պար-տավորությունների ժամանակին մշտադիտարկում և հաշվետվություններ: | ՎԶԵԲ ԻՊ1՝ Ծրագրի մշտադի-տարկում և հաշ-վետվություններ: | ՀՀ ՋԿ (ԾԻԹ կամ Կառույց) Վերահսկող ինժեների աջակցությամբ: | Շինարարության փուլի ընթացքում: | ՎԶԵԲ-ին ներկայացված են կիսամյակային ԲԱՍ մշտադիտարկման հաշվետվություններ: | |
| | Մշակել և ներկայացնել տարեկան Բնապահպանական և Սոցիալական Հաշվետվություններ (ՏԲՍՀ) ԲՍՄՊ-ի առաջընթացի և Ծրագրի ԲԱՍ արդյունավետության վերաբերյալ մինչև վարկի մարումը: | | | ՀՀ ՋԿ (ԾԻԹ): | Տարեկան՝ շահագործման փուլում և մինչև վարկի մարումը: | ՎԶԵԲ-ին ներկայացված են տարեկան ԲԱՍ մշտադիտարկման հաշվետվություններ: | |
| **ԻՊ2** | **Աշխատանք և աշխատանքային պայմաններ** | | | | | | |
| 2.1 | Մշակել և իրականացնել Մարդկային Ռեսուրսների (ՄՌ) քաղաքականություն, որը պետք է համապատասխանի ՎԶԵԲ-ի ԻՊ2-ին և ազգային պահանջներին: ՄՌ քաղաքականությունը պետք է | Աշխատանքային ստանդարտների և աշխատանքային պայմանների բարելավում՝ մարդկային ռեսուրսների քաղաքականության և | ՎԶԵԲ ԻՊ2՝ Աշխատանքային հարաբերություն-ների կառավա-րում և բողոքարկման մեխանիզմ: | ՀՀ ՋԿ-ն և նախագծման և կառուցման կապալառուն՝ համապատասխան իրենց աշխատուժին՝ մարդկային ռեսուրսների | Շինարարական աշխատանքների մեկնարկից առաջ: | Մարդկային ռեսուրսների քաղաքականությունը և օժանդակ ընթացակարգերը ընդունվել են, ներկայացվել ՎԶԵԲ-ին և պարբերաբար վերահսկվում է: | |

| № | Միջոցառում | Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություն/ օգուտներ) | Պահանջներ (իրավական, ՎԶԵԲ ԲՍՊ, լավագույն փորձ) | Ռեսուրսներ, ներդրումներ, պատաս-խանատվություն | Ժամկետներ[3] | Թիրախ և հաջող իրականացման գնահատման և չափանիշ2 | Կարգավիճակ/ Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ներառի հետևյալ հստակ պարտավորություններ՝<br>• Խտրականության բացառում և հավասար հնարավորություններ,<br>• Աշխատողների ժամանակավոր կացարան,<br>• Սեռական բռնության և ոտնձգությունների կանխարգելման և դրանց արձագանքման սկզբունքներ,<br>• Նվազագույն աշխատավարձ, աշխատանքային ժամեր և վճարովի արտաժամյա աշխատանք,<br>• Հարկադիր և մանկական աշխատանքի արգելք,<br>• Աշխատողների բողոքարկման մեխանիզմներ,<br>• Աշխատողների վարքագծի կանոնագիրք,<br>• Աշխատողների իրավունքների վերաբերյալ տեղեկատվության հասանելիություն,<br>• Միավորման ազատություն և կոլեկտիվ բանակցություններ,<br>• Հաստիքային և ոչ հաստիքային աշխատողներին տեղեկացնել Ծրագրի մարդկային ռեսուրսների | ընթացակարգերի հստակ հաղորդակցման միջոցով:<br>Աշխատանքային խախտումների ռիսկի նվազեցում, ինչպիսիք են խտրականությունը, անարդար վերաբերմունքը կամ անվտանգ աշխատանքային պայմանները: | Ազգային պահանջներ:<br>Աշխատանքի միջազգային կազ-մակերպության կոնվենցիաներ: | քաղաքականությունը մշակելու, իրականացնելու և պահպանելու համար: | | Աշխատողների բողոքների գրանցամատյանը պահպանվում և ներկայացվում է ՎԶԵԲ-ին ամեն տարի: | |

| № | Միջոցառում | Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություն/ օգուտներ) | Պահանջներ (իրավական, ՎԶԵԲ ԲՍՊ, լավագույն փորձ) | Ռեսուրսներ, ներդրումներ, պատաս-խանատվություն | Ժամկետներ[3] | Թիրախ և հաջող իրականացման գնահատման և չափանիշ2 | Կարգավիճակ/ Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | քաղաքականության դրույթների մասին:<br>ՄՌ քաղաքականությունը և հարակից ընթացակարգերը պետք է տրամադրվեն բոլոր հաստիքային և ոչ հաստիքային աշխատողներին:<br>Աշխատողների բողոքարկման մեխանիզմը պետք է հասանելի լինի բոլոր աշխատողներին, այդ թվում ոչ հաստիքային և մատակարարման շղթայի աշխատողներին: | | | | | | |
| 2.2 | Ապահովել Ծրագրի շինարարության և շահագործման փուլերում ազդակիր համայնքների և բիզնեսների համար զբաղվածության և գնումների հնարավորությունների վերաբերյալ թափանցիկ տեղե-կատվության հասանելիությունը:<br>ՇՆՊ-ի իրականացման շրջանակներում կազմակերպել հատուկ տեղեկատվական և ներգրավման միջոցառումներ ազդակիր համայնքների համար զբաղվածության և գնումների հնարավորությունների վերաբերյալ: | Զբաղվածության սպասումների կառավարում: | ՎԶԵԲ ԻՊ2 | ՀՀ ՋԿ, Նախագծման և կառուցման կապալառու: | Շինարարության մեկնարկից առաջ և շինարարության ընթացքում: | ՇՆՊ-ը ներառում է Ծրագրի հետ կապված հնարավորությունների հաղորդակցման եղանակի վերաբերյալ հստակ դրույթներ:<br>Շինարարական աշխատուժի կառավարման պլանի տեղական զբաղվածության ենթապլանը ներառում է հնարավորություններին հասանելիությունը հեշտացնելու համար հատուկ մշակված գործողություններ: | |
| 2.3 | Ապահովել, որ ՄՌ քաղաքականության մեջ նշված հիմնական աշխատանքային պահանջները տարածվեն Ծրագրի բոլոր կապալառուների | Կապալառուների և ենթակապալառուների ՄՌ-երի պատշաճ կառավարում: | ՎԶԵԲ ԻՊ2՝ Աշխատանքային հարաբերություն- | ՀՀ ՋԿ (ԾԻԹ կամ Կառույց): | Մրցութային փաստաթղթերի և պայմանագրերի մշակման փուլերում: Շինարարության | Աշխատանքային պահանջները ներառված են նախագծման և կառուցման կապալառուի և ենթակապալառուների | |

| № | Միջոցառում | Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություն/ օգուտներ) | Պահանջներ (իրավական, ՎԶԵԲ ԲՍՊ, լավագույն փորձ) | Ռեսուրսներ, ներդրումներ, պատասխանատվություն | Ժամկետներ[3] | Թիրախ և հաջող իրականացման գնահատման և չափանիշ2 | Կարգավիճակ/ Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | և ենթակապալառուների վրա՝ ներառելով դրանք մրցութային փաստաթղթերում և պայմանագրային համաձայնագրերում: | | ների կառավարում: | Նախագծման և կառուցման կապալառու: | ընթացքում, երբ ներգրավվում են նոր ենթակապալառուներ: | մրցութային փաստաթղթերում և պայմանագրերում: | |
| 2.4 | Համոզվել, որ նախագծման և կառուցման կապալառուն մշակում և իրականացնում է շինարարության փուլի Աշխատանքի Կառավարման Պլան (ԱԿՊ), ներառյալ տեղական զբաղվածության ենթապլանը, աշխատողների վարքագծի կանոնագիրքը և ենթակապալառուների ներքին աշխատանքային վերահսկողության և մշտադիտարկման ծրագիրը:<br>Եթե շինարարության փուլի համար անհրաժեշտ են ժամանակավոր կացարաններ, նախագծման և կառուցման կապալառուն պետք է ապահովի, որ կացարանը համապատասխանի ՄՖԿ/ՎԶԵԲ աշխատողների կացարանների ուղեցույցում սահմանված չափանիշներին: | Աշխատանքի և աշխատանքային պայմանների կառավարման բարելավում:<br>Աշխատողների անվտանգ աշխատանքային և կենսապայմաններ: | ՎԶԵԲ ԻՊ2՝ Աշխատանքային հարաբերություն-ների կառավարում:<br>ՄՖԿ ուղեցույց. Աշխատողների կացարաններ. գործընթացներ և չափորոշիչներ (2009) | ՄևԻ՝ Նախագծման և կառուցման կապալառու:<br>Հ՝ Վերահսկող ինժեներ:<br>ՀՀ ՋԿ՝ առարկության բացակայություն: | Մշակվել և ներդրվել է շինարարական աշխատանքների մեկնարկից առաջ: | ԱԿՊ-ը մշակված է, հաստատված և ներդրել է Նախագծման և կառուցման կապալառուի կողմից: | |
| 2.5 | Վարկատուների ԲևՍ մշտադիտարկման խորհրդատուների առաջադրանքի շրջանակներում թույլատրել շինարարության փուլում անկախ աշխատանքային աուդիտներ | Անվտանգ աշխատանքային պայմանների և աշխատողների իրավունքների բարելավում: | ՎԶԵԲ ԻՊ2՝ Աշխատանքային հարաբերություն-ների կառավարում: | ՀՀ ՋԿ-և վարձելու է անկախ աշխատանքային աուդիտոր(ներ) և պատվիրելու է Ծրագրի | 1-ին աուդիտ՝ շինարարության մեկնարկից անմիջապես առաջ: | ՎԶԵԲ-ի կողմից ընդունված աշխա-տանքային աուդիտի հաշվետվություններ:<br>Աուդիտոր(ներ)ի աշխատանքային պար- | |

| № | Միջոցառում | Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություն/ օգուտներ) | Պահանջներ (իրավական, ՎԶԵԲ ԲՍՊ, լավագույն փորձ) | Ռեսուրսներ, ներդրումներ, պատաս-խանատվություն | Ժամկետներ[3] | Թիրախ և հաջող իրականացման գնահատման և չափանիշ2 | Կարգավիճակ/ Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | անցկացնել՝ ստուգելու համար, որ Ծրագիրը համապատասխանում է ՎԶԵԲ-ի աշխատանքային պահանջներին: | Համապատասխանու-թյուն միջազգային և ազգային աշխատանքային պահանջներին: | | երկու աշխատանքային աուդիտներ: | 2-րդ աուդիտ՝ շինարարության փուլի զագաթնակետին: | տականությունները և ինքնակենսագրություն-ները ընդունված և հաստատված են ՎԶԵԲ-ի կողմից: | |
| **ԻՊ3** | **Ռեսուրսների արդյունավետություն և աղտոտման կանխարգելում ու վերահսկում** | | | | | | |
| 3.1 | Ապահովել, որ մրցույթի տեխնիկական մասնագրերը և ջրամբարների հաստատված նախագծերը ներառեն հակաֆիլտրացիոն միջոցառումներ՝ ջրի կորուստները կանխելու համար: | Առաջարկվող ջրամբարների տեղակայման վայրերի երկրաբանական կառուցվածքն ջրադիմացկուն չէ, ինչը ջրի ներթափանցման և կորստի ռիսկ է առաջացնում: | ՎԶԵԲ ԻՊ3: Լավագույն միջազգային գործելակերպ: | ՀՀ ՋԿ, Նախագծման և կառուցման կապալառու: | Գնումների և պայմանագրի կնքման փուլում: | Մրցութային մասնա-գրերը պարունակում են հստակ պահանջներ՝ նախագծում ներթափանցման դեմ տեխնիկական միջոցառումներ ներառելու համար: | |
| 3.2 | Իրականացնել լրացուցիչ և հետևողական հիդրոլոգիական մոդելավորում և հոսքի մշտադիտարկում ջրամբարների տեղանքներում ու զգայուն վայրերում, ինչպես նշված է Անդրսահմանային ազդեցության գնահատման հաշվետվությունում՝ ներկայիս հիդրոլոգիան և ազդեցության գնահատումը վավերացնելու համար: | Անդրսահմանային ազդեցության գնահա-տումը և համապա-տասխան մոդելավոր-րումը եզրահանգում են, որ ստորին հոսանքն օգտագոր-ծողների վրա էական ազդեցությունները քիչ հավանական են: Հիմնական կետերում, ինչպիսիք են զգայուն վայրերը և ջրամբարները, չափումների իրակա-նացումը կօգնի ավելի մեծ վստահությամբ հաստատել այս եզրակացությունը: | ՎԶԵԲ ԻՊ3: Լավագույն միջազգային գործելակերպ: | ՀՀ ՋԿ և Նախագծման և կառուցման կապալառու: | Վարկի առաջին մարումից առաջ և ամեն դեպքում շինարարության մեկնարկից առաջ: | Հոսքի մշտադիտարկման սարքերը տեղադրված են բոլոր տեղանքներում: Մոդելավորման արդյունքները և հաշվետվությունը ներկայացվում են ՎԶԵԲ-ին: | |

| № | Միջոցառում | Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություն/ օգուտներ) | Պահանջներ (իրավական, ՎԶԵԲ ԲՍՊ, լավագույն փորձ) | Ռեսուրսներ, ներդրումներ, պատաս-խանատվություն | Ժամկետներ[3] | Թիրախ և հաջող իրականացման գնահատման և չափանիշ2 | Կարգավիճակ/ Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 3.3 | Քասախի ջրամբարի վայր 2-ում անցկացնել ձկաբանական ուսումնասիրություններ, ինչպես նշված է Անդրսահմանային ազդեցության գնահատման հաշվետվությունում, ներառյալ ձկների միգրացիայի օրինաչա-փությունների վերլուծությունը՝ Քասախի ջրամբարի շահա-գործման պատճառով ստորին հոսանքն օգտագործողների վրա ազդեցության բացակայությունը պարզելու համար։<br>Թարմացնել/լրացնել Քասախի ջրամբարի ազգային ՇՄԱԳ-ը՝ շահագործման ընթացքում ձկների միգրացիայի վրա ազդեցությունը գնահատելու համար։<br>Կառուցել և պահպանել ձկնուղի Քասախի ջրամբարի շինարարության և շահագործման ողջ ընթացքում։ | Անդրսահմանային ազդեցության գնահատումը եզրահանգում է, որ ձկների վրա էական անդրսահմանային ազդեցությունները քիչ հավանական են։ Սահմանված վայրերում միգրացիայի օրինաչափությունների վրա կենտրոնացած ձկնաբանական ուսումնասիրության անցկացումը կարող է օգնել ավելի մեծ վստահությամբ հաստատել այս եզրակացությունը։. | ՎԶԵԲ ԻՊ3։ | ՀՀ ՋԿ և Նախագծման և կառուցման կապալառու։ | Վարկի առաջին մարումից առաջ և ամեն դեպքում շինարարության մեկնարկից առաջ։ | Անդրսահմանային վայր 2-ի ձկնաբանական ուսումնասիրությունների և ձկների միգրացիայի օրինաչափությունների վերաբերյալ հաշվետվությունը ներկայացված է ՎԶԵԲ-ի վերանայմանը և հաստատմանը։ | |
| 3.4 | Գնահատել Քասախի ջրամբարի տեղական ազդեցությունը ձկների միգրացիայի վրա շահագործման փուլում։ | Ազգային ՇՄԱԳ-ը չի ներառել ձկների վրա ազդեցությունը շահագործման ընթացքում։ | ՎԶԵԲ ԻՊ3։ | ՀՀ ՋԿ և Նախագծման և կառուցման կապալառու։ | Վարկի առաջին մարումից առաջ և ամեն դեպքում շինարարության մեկնարկից առաջ։ | Ձկների միգրացիայի ազդեցության վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվել է ՎԶԵԲ-ի վերանայմանը և հաստատմանը։ | |
| 3.5 | Հնարավորինս շուտ սկսել ամենօրյա հոսքի չափումներ բոլոր ջրամբարների տեղանքներում՝ ապագա հիդրոլոգիական | Բանկի ԲԱՍ ռիսկերի գնահատումը բացա-հայտել է զգալի անհամապատասխա-նություններ նախա- | ՎԶԵԲ ԻՊ3։ | ՀՀ ՋԿ և Նախագծման և կառուցման կապալառու։ | Վարկի առաջին մարումից առաջ և ամեն դեպքում շինարարության մեկնարկից առաջ։ | Հոսքի չափման գրանցամատյանները պահպանվում են ՀՀ ՋԿ-ում և տրամադրվում են ՎԶԵԲ-ին։ | |

| № | Միջոցառում | Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություն/ օգուտներ) | Պահանջներ (իրավական, ՎԶԵԲ ԲՍՊ, լավագույն փորձ) | Ռեսուրսներ, ներդրումներ, պատաս-խանատվություն | Ժամկետներ[3] | Թիրախ և հաջող իրականացման գնահատման և չափանիշ2 | Կարգավիճակ/ Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ուսումնասիրությունների համար ելակետային տվյալներ սահմանելու և նախագծի հիդրոլոգիական մեծության կարգը ստուգելու համար: | գծային ներհոսքի և մոդելավորման արդյունքում ստացված գնահատականների միջև, որոնք կարող են կարևոր հետևանքներ ունենալ ջրամբարների նախագծման և շահա-գործման համար: Այս անհամապատասխա-նությունները հիմնա-կանում պայմանավոր-ված են չափման հուսալի տվյալների բացակայությամբ: Հոսքի տվյալների հավաքագրումը թույլ կտա Նախագծման և կառուցման կապալառուներին ստանալ ավելի հուսալի հիդրոլոգիական գնահատական: | | | | | |
| 3.6 | Պահանջել նախագծման և կառուցման կապալառուից անցկացնել անկախ և հուսալի հիդրոլոգիական գնահատում՝ որակավորված երրորդ կողմի փորձագետների կողմից: | Ներկայումս հասանելի նախագծային տվյալ-ների մեջ առկա են անհամապատասխանո ւթյունների նշանակալի բացեր: | ՎԶԵԲ ԻՊ3: | ՀՀ ՋԿ և Նախագծման և կառուցման կապալառու: | Վարկի առաջին մարումից առաջ և ամեն դեպքում շինարարության մեկնարկից առաջ: | Հիդրոլոգիական գնահատման անցկացման պահանջները ներառված են մրցույթի տեխնիկական մասնագրերում և նախագծման-կառուցման պայմանագրերում: | |
| 3.7 | Ապահովել, որ ջրամբարների նախագծերը վերանայվեն կամ հիմնավորված կերպով | Ներկայումս հասանելի նախագծային տվյալ-ների մեջ առկա են | ՎԶԵԲ ԻՊ3: | ՀՀ ՋԿ և Նախագծման և կառուցման կապալառու: | Վարկի առաջին մարումից առաջ և ամեն դեպքում | Ավարտական նախագիծը հիմնված է վերջին հիդրոլոգիական | |

| № | Միջոցառում | Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություն/ օգուտներ) | Պահանջներ (իրավական, ՎԶԵԲ ԲՍՊ, լավագույն փորձ) | Ռեսուրսներ, ներդրումներ, պատաս-խանատվություն | Ժամկետներ[3] | Թիրախ և հաջող իրականացման գնահատման և չափանիշ2 | Կարգավիճակ/ Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | հավաստվեն նախագծման և կառուցման կապալառուների կողմից՝ հիդրոլոգիական գնահատման արդյունքների և եզրակացությունների հիման վրա: | անհամապատասխանո ւթյունների նշանակալի բացեր: | | | շինարարության մեկնարկից առաջ: | գնահատման վրա և հաստատված է ՎԶԵԲ-ի կողմից: | |
| 3.8 | Շինարարության և շահագործման ընթացքում իրականացնել էրոզիայի դեմ պայքարի միջոցառումներ՝ տեղադրելով թեքության կոտրիչներ, քարե առուներ, գեոտեքստիլային գորգեր և թեքության կայունության այլ միջոցներ և այլն: | Շինարարությունը կարող է հանգեցնել զգալի էրոզիայի և սողանքային երևույթների: | ՎԶԵԲ ԻՊ3: | Նախագծման և կառուցման կապալառու և շինարարությանը ներգրավված ցանկացած ենթակապալառու: | Սկսել գործընթացը նախագծման և շինարարության փուլում: Համապատասխան միջոցառումները ներառված են մանրամասն նախագծային փաստաթղթերում և շինարարական պլաններում: | Էրոզիայի դեմ պայքարի նախագծման և ճարտարագիտական միջոցառումները և դրանց կիրառման ապացույցները տրամադրված են ՎԶԵԲ-ին: | |
| 3.9 | Ապահովել, որ ջրամբարների նախագծումը, շինարարությունը և շահագործումը ներառեն տեխնիկական միջոցառումներ՝ սնուցող գետերի էկոլոգիական թողքը մշտապես պահպանելու համար: | Բնապահպանական հոսքի չապահովումը կարող է զգալի ազդեցություն ունենալ մասնավորապես ստորին ջրօգտագործողների վրա: | ՎԶԵԲ ԻՊ3, Լավագույն միջազգային գործելակերպեր: | ՀՀ ՋԿ, Նախագծման և կառուցման կապալառու, Ջրառ ՓԲԸ: | Սկսել գործընթացը նախագծման և շինարարության փուլում: Համապատասխան նախագծային, ճարտա-րագիտական և շահա-գործման միջոցառում-ները ներառված են նախագծային փաստաթղթերում և շինարարության ու շահագործման կառա-վարման պլաններում: | Բնապահպանական հոսքը չափվում և կանոնավոր կերպով գրանցվում է: | |
| 3.10 | Ջրամբարների շահագործման նախագծում ներառել ՇՄՍԱԳ ուսումնասիրություններում | Սպասարկման բացակայությունը կարող է հանգեցնել | ՎԶԵԲ ԻՊ3, Լավագույն | ՀՀ ՋԿ, Նախագծման և կառուցման կապալառու, Ոռոգման | Սկսել գործընթացը նախագծման և շինարարության | Անհրաժեշտ տեխնիկական և գործառնական | |

| № | Միջոցառում | Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություն/ օգուտներ) | Պահանջներ (իրավական, ՎԶԵԲ ԲՍՊ, լավագույն փորձ) | Ռեսուրսներ, ներդրումներ, պատաս-խանատվություն | Ժամկետներ[3] | Թիրախ և հաջող իրականացման գնահատման և չափանիշ2 | Կարգավիճակ/ Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Նշված իրագործելի տեխնիկական, ճարտարագիտական և սպասարկման միջոցառումներ՝ ջրամբարներում էվտրոֆիկացման գործընթացը կանխելու համար: | ջրի որակի վատթարացման և ազդեցություն ունենալ ստորին ջրօգտագործողների վրա: | միջազգային գործելակերպեր: | համակարգի նախագծող ինժեներ, Ջրառ ՓԲԸ: | փուլում: Համապատասխան նախագծման, շահագործման և սպասարկման պլաններ: | միջոցառումների ապացույցները ներկայացված են ՎԶԵԲ-ին: | |
| 3.11 | Կանխել մաքրման չենթարկված կեղտաջրերի, գյուղատնտեսա-կան հոսքաջրերի և այլ աղտոտված ջրերի ջրամբարներ արտահոսքը՝ կիրառելով տեխնիկական միջոցառումներ և իրազեկության բարձրացման միջոցառումներ, որոնցում ներգրավված կլինեն գյուղատնտեսական հողօգտա-գործողները, արդյունաբերական ընկերությունները և համապատասխան պետական մարմինները: | Ոռոգման ջրի աղտոտումը կարող է ռիսկեր և ազդեցություններ առաջացնել սննդային շղթայի միջոցով: | ՎԶԵԲ ԻՊ3: | ՀՀ ՋԿ, Նախագծման և կառուցման կապալառու, Ոռոգման ջրամբարի և ոռոգման համակարգի նախա-գծող ինժեներներ (ֆինանսավորվելու են Բանկի կողմից), Ջրառ ՓԲԸ, Ջրօգտագործողների ընկերություններ: | Սկսել գործընթացը նախագծման և շինարարության փուլում: Համապատասխան միջոցառումները ներառված են նախագծման և կառավարման պլաններում: | Տեխնիկական միջոցառումների և համապատասխան օգտագործողների ու մարմինների հետ խորհրդակցությունների ապացույցները ներկայացված են ՎԶԵԲ-ին: | |
| 3.12 | Ի լրումն Ծրագրի ՏԲԲՍԿՊ-ներում առաջարկվող ազդեցության մեղմացման կոնկրետ միջոցառումների, մշակել և իրականացնել Ծրագրի շինարարության փուլի ռեսուրսների և էներգաարդյու-նավետության ռազմավարու-թյուն, ներառյալ հետևյալ պարտավորությունները՝<br>• Օգտագործել էներգաարդյունավետ սարքավորումներ (օրինակ՝ LED լուսավորություն | Ռեսուրսների և էներգիայի սպառման կրճատում:<br>Ծրագրի բնապահպանական արդյունավետության բարելավում: | ՎԶԵԲ ԻՊ3՝ Ռեսուրսների արդյունավետու-թյուն:<br>ԼՄԳ: | Նախագծման և կառուցման կապա-լառու՝ ռեսուրսների և էներգաարդյունավետ-տության ռազմավարության մշակում և իրականացում:<br>Վերահսկող ինժեներ՝ ռեսուրսների և էներգաարդյունավետ-տության ռազմավարության հաստատում: | Մ՝ Շինարարական աշխատանքների մեկնարկից առաջ:<br>Ի՝ Շինարարական աշխատանքների ընթացքում: | Ռեսուրսների և էներգա-արդյունավետության ռազմավարությունը մշակված է, հաստատված և արդյունավետորեն իրականացվում է:<br>Վառելիքի, էլեկտրաէներգիայի, ջրի և նյութերի համար KPI-ների սահմանված են, պարբերաբար մշտադիտարկված և զեկուցվում են: | |

| № | Միջոցառում | Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություն/ օգուտներ) | Պահանջներ (իրավական, ՎԶԵԲ ԲՍՊ, լավագույն փորձ) | Ռեսուրսներ, ներդրումներ, պատաս-խանատվություն | Ժամկետներ[3] | Թիրախ և հաջող իրականացման գնահատման և չափանիշ2 | Կարգավիճակ/ Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | շարժման սենսորներով կամ ժամանակաչափերով),<br>• Անջատել չօգտագործվող սարքավորումները՝ տարածքի կառավարման վերահսկողության միջոցով,<br>• Հնարավորության դեպքում կիրառել Եվրո V կամ ավելի բարձր ստանդարտի մեքենաներ,<br>• Նախապատվություն տալ էլեկտրական կամ հիբրի-դային սարքավորումներին և ծանր բեռնատար մեքենաներին՝ բենզինով, դիզելով կամ հեղուկ գազով աշխատողների փոխարեն,<br>• Սարքավորումների կանոնավոր սպասարկում՝ վառելիքի այրումը օպտիմալացնելու և արտանետումները նվազեցնելու համար,<br>• Հնարավորության դեպքում օգտագործել ոչ խմելու կամ մաքրված ջուր՝ տարածքի փոշենստեցման և մաքրման համար,<br>• Ներդնել ջուր խնայող սարքեր (ցածր հոսքի ծորակներ, ճզմանային ծայրակալներ),<br>• Օպտիմալացնել նյութերի պատվերը՝ հիմնվելով մանրամասն քանակական | | | ՀՀ ՋԿ և ՎԶԵԲ՝ առարկության բացակայություն: | | | |

| № | Միջոցառում | Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություն/ օգուտներ) | Պահանջներ (իրավական, ՎԶԵԲ ԲՍՊ, լավագույն փորձ) | Ռեսուրսներ, ներդրումներ, պատաս-խանատվություն | Ժամկետներ[3] | Թիրախ և հաջող իրականացման գնահատման և չափանիշ2 | Կարգավիճակ/ Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | գնահատականների և հաշվարկների վրա,<br>• Տեղայնացնել նյութերը՝ տրանսպորտային վառելիքի օգտագործումը և արտանետումները նվազեցնելու համար,<br>• Առաջնահերթություն տալ վերամշակված նյութերին (վերամշակված լցանյութեր, պողպատ և այլն),<br>• Օգտագործել էներգաարդյունավետ մոդուլային գրասենյակներ՝ պատշաճ մեկուսացումով և արդյունավետ HVAC համակարգով,<br>• Տեղադրել ցածր էներգիա սպառող սարքավորումներ ճամբարներում,<br>• Օպտիմալացնել սննդի մատակարարման գործունեությունը՝ թափոնները կրճատելու և վերաօգտագործումը խթանելու համար,<br>• Օպերատորներին տրամադրել էկո-վարման դասընթացներ և ներդնել վառելիքի օգտագործման մշտադիտարկում (գրանցա-մատյաններ կամ հաղորդակ-ցություն) շինարարական տրանսպորտային միջոցների համար: | | | | | | |

| № | Միջոցառում | Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություն/ օգուտներ) | Պահանջներ (իրավական, ՎԶԵԲ ԲՍՊ, լավագույն փորձ) | Ռեսուրսներ, ներդրումներ, պատաս-խանատվություն | Ժամկետներ[3] | Թիրախ և հաջող իրականացման գնահատման և չափանիշ2 | Կարգավիճակ/ Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Սահմանել վառելիքի, էլեկտրաէներգիայի, ջրի և նյութերի սպառման և վերաօգտագործման KPI-ներ: Հետևել ռեսուրսների արդյունավետության ցուցանիշներին և եռամսյակը մեկ ներկայացրել ՀՀ ՋԿ-ին և ՎԶԵԲ-ին (տես նաև **կետ 1.10**): | | | | | | |
| 3.13 | Իրականացնել բոլոր ՏՐԲՍԿՊ-ները, որոնք վերաբերում են օդին, աղմուկին, թրթռմանը, հողին, թափոններին, ջրին, վտանգավոր նյութերին, կենսաբազմազանությանը և այլն, ինչպես նշված է նաև **կետ 1.5**-ում և ԲՍՄՊ-ի այլ կետերում: | Օդի, աղմուկի և թրթռումների արտանետումների, ինչպես նաև հողի և ջրի աղտոտվածության արդյունավետ վերահսկողություն: | ՎԶԵԲ ԻՊ3:<br>Ազգային պահանջներ: | Նախագծման և կառուցման կապալառու և շինարարությանը մասնակցող ցանկացած ենթակապալառու: | Ելակետային մշտադիտարկումը անցկացվում է շինարարության մեկնարկից առնվազն 21 օր առաջ և կանոնավոր կերպով շինարարության ողջ ընթացքում: | Մշտադիտարկման հաշվետվությունները պարբերաբար մշակվում են և ներկայացվում Վերահսկող ինժեներին: | |
| 3.14 | Մշակել և ներկայացնել պետական լիազոր մարմիններին բնապահպանական հաշվետվություններ՝ համաձայն ազգային օրենսդրության պահանջների, ներառյալ՝<br>ա) Եռամսյակային բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկ-հաշվետվությունը հարկային մարմիններին,<br>բ) Մթնոլորտային արտանետումների, ջրօգտագործման և թափոնների առաջացման | Պետական բնապահպանական տեսչական մարմնի կողմից տուգանքների ռիսկը: | Ազգային պահանջներ (Հարկային օրենսգիրք, Ջրային օրենսգիրք, Թափոնների մասին օրենք, Մթնոլորտային օդի պահպա-նության մասին օրենք և այլն): | Նախագծման և կառուցման կապալառու: | Սկսած շինարարության փուլից: | Եռամսյակային և տարեկան բնապահպանական հաշվետվությունները կազմվել և ներկայացվել են համապատասխան պետական մարմիններին: | |

| № | Միջոցառում | Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություն/ օգուտներ) | Պահանջներ (իրավական, ՎԶԵԲ ԲՍՊ, լավագույն փորձ) | Ռեսուրսներ, ներդրումներ, պատաս-խանատվություն | Ժամկետներ[3] | Թիրախ և հաջող իրականացման գնահատման և չափանիշ | Կարգավիճակ/ նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | վերաբերյալ տարեկան վիճակագրական հաշվետվությունները ՀՀ Վիճակագրական կոմիտե: | | | | | | |
| **ԻՊ4** | **Առողջություն, աշխատանքի պաշտպանություն և անվտանգություն** | | | | | | |
| 4.1 | Մշակել և իրականացնել պատվարի անվտանգության պլաններ և արտակարգ իրավիճակներին պատրաստվածության և արձագանքման պլաններ՝ ջրհեղեղների, ծայրահեղ ջերմային երևույթների, սողանքների և այլ ռիսկերին արձագանքելու համար: | Հնարավոր արտակարգ իրավիճակները կարող են վտանգել աշխատողների և համայնքների անվտանգությունը: | ՎԶԵԲ ԻՊ4, ICOLD, Լավագույն միջազգային գործելակերպ: | Մ՝ Նախագծման և կառուցման կապալառու:<br>Հ՝ ՀՀ ՋԿ և Ջրառ ՓԲԸ:<br>Ի՝ Նախագծման և կառուցման կապալառու - կառուցման փուլում, Ջրառ ՓԲԸ - շահագործման փուլում: | Շինարարության մեկնարկից առաջ: | Պատվարի անվտանգության պլանը և արտակարգ իրավիճակներին պատրաստվածության և արձագանքման պլանները ներկայացված են ՎԶԵԲ-ին՝ վերանայման և մեկնաբանությունների համար: | |
| 4.2 | Ազգային օրենսդրության համաձայն արտադրական վտանգավոր օբյեկտներ դասակարգված շինարարական տեխնիկան պետք է գրանցվի պետական ռեգիստրում և անցնի տարեկան տեխնիկական անվտանգության փորձաքննություն: Այդպիսի տեխնիկայի օրինակներ են՝<br>• Ավտոկռունկները,<br>• Բարձիչները,<br>• Ճնշման տակ աշխատող անոթները և այլն: | Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տուգանքների ռիսկը: | ՎԶԵԲ ԻՊ4՝ Աշխատանքի պաշտպանություն և առողջություն կառավարման հատուկ պահանջներ:<br>«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենք: | Նախագծման և կառուցման կապալառու: | Շինարարական աշխատանքների մեկնարկից առաջ և տարեկան կտրվածքով շինարարության ողջ ժամանակահատվածի ընթացքում: | Բոլոր արտադրական վտանգավոր օբյեկտները գրանցված են պետական ռեգիստրում և ունեն տեխնիկական անվտանգության փորձաքննության եզրակացություններ: | |
| 4.3 | Մշակել և ներդնել Աշխատանքի Անվտանգության և Առողջության Պահպանման Կառավարման | Արդյունավետ առողջության և | ՎԶԵԲ ԻՊ4՝ Աշխատանքի պաշտպանություն | Նախագծման և կառուցման կապալառու: | Շինարարության մեկնարկից առաջ: | ԱԱԱԱՊԿՊ-ը մշակված է, համաձայնեցված | |

| № | Միջոցառում | Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություն/ օգուտներ) | Պահանջներ (իրավական, ՎԶԵԲ ԲՍՊ, լավագույն փորձ) | Ռեսուրսներ, ներդրումներ, պատաս-խանատվություն | Ժամկետներ[3] | Թիրախ և հաջող իրականացման գնահատման և չափանիշ2 | Կարգավիճակ/ Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Պլան (ԱԱԼԱՊԿՊ), որը պետք է ներառի կառուցման փուլում ԱԱԱՊ արդյունավետության կառավարման հիմնական տարրերը, այդ թվում՝<br>• ԱԱԱՊ դերերի և պատաս-խանատվությունների բաշխումը,<br>• ԱԱԱՊ ռիսկերի և վտանգ-ների նույնականացումը,<br>• Տեղեկատվական հանդիպումները, վերապատրաստումը և գիտելիքների ստուգումը,<br>• ԱԱԱՊ ընթացակարգերը և կանոնակարգերը, ներառյալ աշխատանքի թույլատրման կարգը,<br>• Բժշկական զննումը,<br>• Վտանգավոր քիմիական նյութերի և նավթամթերքի/ վառելիքի կառավարումը,<br>• Հրդեհային անվտանգությունը և արտակարգ իրավիճակներին արձագանքումը,<br>• Բարձր ռիսկային աշխա-տանքների իրականացումը,<br>• Անհատական պաշտպանիչ միջոցների (ԱՊՄ) օգտագործումը,<br>• Ենթակապալառուների վերահսկումը,<br>• Դեպքերի և միջադեպերի | անվտանգության կառավարում:<br>Վթարների և միջադեպերի ռիսկերի նվազեցում: | և առողջություն կառավարման ընդհանուր պահանջներ: | Հ՝ Վերահսկող ինժեներ:<br>ՀՀ ՋԿ և ՎԶԵԲ՝ առարկության բացակայություն: | | Վերահսկող ինժեների հետ և ներդրված է: | |

| № | Միջոցառում | Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություն/ օգուտներ) | Պահանջներ (իրավական, ՎԶԵԲ ԲՍՊ, լավագույն փորձ) | Ռեսուրսներ, ներդրումներ, պատաս-խանատվություն | Ժամկետներ[3] | Թիրախ և հաջող իրականացման գնահատման և չափանիշ2 | Կարգավիճակ/ նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | հետաքննությունը և այլն: | | | | | | |
| 4.5 | Մշակել ԱԱԱՊ ընթացակարգ/հրահանգներ ջրամբարների սպասարկման և վերանորոգման աշխատանքների համար: | Առողջության և անվտանգության գործունեության արդյունավետ կառավարում: Վթարների և միջադեպերի նվազեցում: | ՎԶԵԲ ԻՊ4՝ Աշխատանքի պաշտպանություն և առողջություն կառավարման ընդհանուր պահանջներ: | Նախագծման և կառուցման կապալառու: Հ՝ Վերահսկող ինժեներ: ՀՀ ՋԿ և ՎԶԵԲ՝ առարկության բացակայություն: | Շահագործման փուլի մեկնարկից առաջ: | Շահագործման փուլի համար նախատեսված ԱԱԱՊ ընթացակարգերը մշակված և ներդրված են: | |
| **ԻՊ5** | **Հողերի օտարում, հողօգտագործման սահմանափակումներ և հարկադիր տեղահանում** | | | | | | |
| 5.1 | Մշակել, հրապարակել և իրականացնել ջրամբարների Տարաբնակեցման Պլանները (ՏՊ)՝ համաձայն «Ծրագրի Տարաբնակեցման Շրջանակում» (ՏՇ) սահմանված սկզբունքների և պահանջների: ՏՊ-ները պետք է համապատասխանեն հաստատված ՏՇ-ին և պարունակեն դրույթներ ցանկացած հնարավոր նոր հողերի ձեռքբերման համար, որոնք այս փուլում հայտնի չեն՝ համաձայն «Փոփոխությունների կառավարման» սկզբունքի: ՏՊ-ների իրականացումը պետք է հավաստվի FIDIC ինժեների սոցիալական և տարաբնակեց-ման մասնագետի կողմից մշակված և ՎԶԵԲ-ին հաստատ-ման համար ներկայացվող համապատասխանության | Ծրագրի ազդակիր անձանց (ԾԱԱ) կենսապայմանների վրա ազդեցություն-ների կանխարգելում կամ մեղմացում: Կոնֆլիկտների կանխարգելում և ԾԱԱ-ների հետ դրական հարաբերությունների խթանում: | ՎԶԵԲ ԻՊ5: Ազգային պահանջներ: | ՀՀ ՋԿ-ն՝ տարաբնակեցման և կենսապահովման վերականգնման խորհրդատուների աջակցությամբ: ՀՀ ՋԿ-ի կողմից վարձված FIDIC ինժեներ՝ ՏՊ-ների իրականացման մշտադիտարկումը կատարելու համար: | ՏՊ-ն իրականացվում է և կորցրած ակտիվների համար փոխհատուցումը վճարվում է հողամասեր մուտքից և շինարարության մեկնարկից առաջ: Բոլոր տուժած անձանց համար կենսապայմանների վերականգնման միջոցառումներն իրականացվում են վերջնական վճարումից առաջ և պահպանվում են դրանից հետո: | ՏՊ-ները հաստատված են բոլոր կառույցների կողմից, հրապարակված և իրականացված են: Համապատասխանու-թյան հաշվետվություն(ներ)ը ներկայացված և ընդունված են ՎԶԵԲ-ի կողմից: | |

| № | Միջոցառում | Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություն/ օգուտներ) | Պահանջներ (իրավական, ՎԶԵԲ ԲՍՊ, լավագույն փորձ) | Ռեսուրսներ, ներդրումներ, պատաս-խանատվություն | Ժամկետներ[3] | Թիրախ և հաջող իրականացման գնահատման և չափանիշ2 | Կարգավիճակ/ նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | հաշվետվության(ների) միջոցով (տես **կետ 1.7**): | | | | | | |
| 5.2 | Տարաբնակեցման պլանների լիարժեք իրականացումից հետո, ներառյալ կենսամիջոցների վերականգնման միջոցառումների (գրեթե) ամբողջական իրականացումը, անցկացնել տարաբնակեցման ավարտական աուդիտ: | ՏՊ-ների իրականացման գնահատված արդյունավետություն և ԾԱԱ-ի վրա բացասական ազդեցությունների բացակայության ապահովում: | ՎԶԵԲ ԻՊ5:<br>Ազգային պահանջներ: | ՀՀ ՋԿ-ի կամ ՎԶԵԲ-ի կողմից վարձված արտաքին տարաբնակեցման խորհրդատու: | Կենսամիջոցների վերականգնման միջոցառումների ավարտից հետո, համաձայն ՏՊ-ում նշված ժամանակացույցի: | Ավարտական աուդիտի համար տեխնիկական առաջադրանքը համաձայնեցված է ՎԶԵԲ-ի հետ:<br>Ավարտական աուդիտի հաշվետվությունը հաստատված է ՎԶԵԲ-ի կողմից: | |
| **ԻՊ6** | **Կենսաբազմազանության պահպանում և կենդանի բնական ռեսուրսների կայուն կառավարում** | | | | | | |
| 6.1 | ՇՄՍԱԳ հաշվետվությունների արդյունքների և առաջարկությունների հիման վրա մշակել շինարարության փուլի համար մանրամասն Կենսաբազմազանության Կառավարման Պլան (ԿԿՊ)՝ կենսաբազմազանության առաջնահերթ հատկանիշների զուտ կորստի բացակայությանը հասնելու համար: ԿԿՊ-ն ներկայացնել ՎԶԵԲ-ի հաստատմանը: Հրապարակել ԿԿՊ-ն և համապատասխանաբար իրականացնել այն: | Անհրաժեշտ է բացահայտել և ներառել կենսաբազ-մազանության կորստից խուսափելու համար համապատասխան խուսափողական, սեզոնային սահմանափակումներ և մեղմացնող միջոցառումներ, որոնք կներառվեն շինարարության ժամանակացույցում և պլաններում: | ՎԶԵԲ ԻՊ6: | Նախագծման և կառուցման կապալառու՝ ԲՍՄՊ իրականացման աջակցման խորհրդատուների օգնությամբ: | Մանրամասն նախագծման փուլում և ամեն դեպքում շինարարության մեկնարկից առնվազն 6 ամիս առաջ: | ԿԿՊ-ի նախագիծը ներկայացված է ՎԶԵԲ-ի վերանայմանը և հաստատմանը: | |
| 6.2 | Իրագործել Կենսաբազմազանության Միջոցառումների Պլանները (ԿՄՊ) բոլոր հինգ ջրամբարներում՝ ներառելով նպատակային մեղմացման և | Կենսաբազմազանու-թյան կորստի կանխարգելում և Կրիտիկական Կենսամիջավայրերի (ԿԿ) և Կենսաբազմա- | ՎԶԵԲ ԻՊ6՝ Կենսաբազմազա-նության պահպանում:<br>ՎԶԵԲ-ի ուղեցույց՝ Կենսաբազմազա- | Նախագծման և կառուցման կապալառու կենսա-բազմազանության խորհրդատուների աջակցմամբ: | ԿՄՊ-ները վերջնականացվում են շինարարությունից առաջ և իրագործվում շինարարության ընթացքում, | ԿՄՊ-ը արդյունավետորեն իրականացված է:<br>Բնական կենսամիջավայրերի | |

| № | Միջոցառում | Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություն/ օգուտներ) | Պահանջներ (իրավական, ՎԶԵԲ ԲՍՊ, լավագույն փորձ) | Ռեսուրսներ, ներդրումներ, պատաս-խանատվություն | Ժամկետներ[3] | Թիրախ և հաջող իրականացման գնահատման և չափանիշ2 | Կարգավիճակ/ նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | մշտադիտարկման միջոցառումներ՝ անհրաժեշտության դեպքում կենսաբազմազանության «զուտ աճի» կամ «զուտ կորստի» բացակայությանը հասնելու համար: | զանության Առաջնահերթ Հատկանիշների (ԿԱՀ) պաշտպանություն: | նության պահպա-նում և կենդանի բնական ռեսուրս-ների կայուն կա-ռավարում (2023): Ազգային պահանջներ: | ՎԶԵԲ՝ հաստատում: Վերահսկող ինժեներ՝ մշտադիտարկում: | անհրաժեշտության դեպքում թարմացվում են: | «զուտ կորուստ» չկա և «զուտ աճը» հասանելի է: | |
| 6.3 | Ապահովել, որ նախագծման և կառուցման կապալառուի և վերահսկող ինժեների կողմից նշանակվեն որակյալ անձնակազմ (կենսաբազմազա-նության փորձագետներ)՝ համապատասխանաբար կենսաբազմազանության միջոցառումների իրականացման և մշտադիտարկման համար, և հաստատվեն համապատասխան բյուջեները (տես նաև **կետ 1.2**): | | ՎԶԵԲ ԻՊ6՝ Կենսաբազմազա-նության պահպանում: Ազգային պահանջներ: | Նախագծման և կառուցման կապալառու: Վերահսկող ինժեներ: | Նախագծման և կառուցման կապալառուի և Վերահսկող ինժեների հետ պայմանագրեր կնքելուց հետո: | Նախագծման և կառուցման կապալառուի և Վերահսկող ինժեների թմերը համալրված են իրազեկ և պատշաճ քանակով ԲԱՍ մասնագետներով: | |
| 6.4 | Մշակել, հրապարակել և իրականացնել Կենսաբազմազանության Փոխհատուցման Կառավարման Պլան (ԿՓԿՊ)՝ հիմնվելով ԿՄՊ-ի (Կենսաբազմազանության փոխհատուցման ռազմավարության բաժին) սկզբունքների վրա: | | ՎԶԵԲ ԻՊ6՝ Կենսաբազմազա-նության պահպանում: Ազգային պահանջներ: | Նախագծման և կառուցման կապալառու մասնագիտացված կապալառուի աջակցմամբ: Վերահսկող ինժեներ՝ վերանայում և հաստատում: | Մ՝ շինարարական աշխատանքների մեկնարկից առաջ: Ի՝ շինարարության վաղ փուլերում: | ԿՓԿՊ-ը մշակված և իրագործված է: | |
| 6.5 | Իրականացնել նախաշինարարական դաշտային կենսաբազմազանության հետազոտություններ՝ ԿՄՊ-ում սահմանված ճիշտ ժամանակահատվածին, ինչպես | | ՎԶԵԲ ԻՊ6՝ Կենսաբազմազա-նության պահպանում: | Նախագծման և կառուցման կապալառու: | Նախաշինարարական հետազոտություններ՝ շինարարական աշխատանքների մեկնարկից առաջ: | Ուսումնասիրությունները ավարտված են և մեղմացնող միջոցառումները մշակված, ինչպես պահանջվում է: | |

| № | Միջոցառում | Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություն/ օգուտներ) | Պահանջներ (իրավական, ՎԶԵԲ ԲՍՊ, լավագույն փորձ) | Ռեսուրսներ, ներդրումներ, պատաս-խանատվություն | Ժամկետներ[3] | Թիրախ և հաջող իրականացման գնահատման և չափանիշ2 | Կարգավիճակ/ նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | նաև լրացուցիչ դաշտային հետազոտություններ՝ Ծրագրի այն բաղադրիչների համար, որոնց տեղակայման վայրերը ներկայումս անհայտ են և կառաջարկվեն ուսումնասիրված տարածքներից դուրս:<br>Ուսումնասիրությունների հիման վրա համապատասխանաբար թարմացնել ԿՄՊ-ը (անհրաժեշ-տության դեպքում) և համա-ձայնեցնել այն ՎԶԵԲ-ի հետ: | | Ազգային պահանջներ: | | Լրացուցիչ հետազոտություններ՝ անհրաժեշտության դեպքում:<br>Վերահսկող ինժեներ՝ հաստատում: | ԿՄՊ-ը թարմացված է և համաձայնեցված ՎԶԵԲ-ի հետ: | |
| **ԻՊ8** | **Մշակութային ժառանգություն** | | | | | | |
| 8.1 | Խուսափել և նվազագույնի հասցնել տեղական գերեզմանատների, պաշտամունքի վայրերի և հնագիտական վայրերի մուտքի ազդեցություններն ու սահմանափակումները: Խորհրդակցել ազդակիր համայնքների և համապատասխան մարմինների հետ, եթե անհրաժեշտ լինի գերեզմանատների կամ հնագիտական արտեֆակտերի տեղափոխում, կամ եթե Ծրագիրը սահմանափակումներ կառաջացնի պաշտամունքի վայրեր մուտքի վրա և այլն: | Ծրագիրը կարող է ազդեցություն ունենալ տեղական գերեզմանատների, պաշտամունքի վայրեր մուտք գործելու ճանապարհի և հայտնաբերված հնագիտական արտեֆակտների վրա: | ՎԶԵԲ ԻՊ8: | Նախագծման և կառուցման կապալառու: | Մանրամասն նախագծման փուլում և ամեն դեպքում՝ հողի օտարումից և մաքրումից առաջ: | Խորհրդակցությունների և ազդեցություններից խուսափելու և նվազագույնի հասցնելու միջոցառումների վերաբերյալ ապացույցները ներկայացված են ՎԶԵԲ-ին: | |

| № | Միջոցառում | Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություն/ օգուտներ) | Պահանջներ (իրավական, ՎԶԵԲ ԲՍՊ, լավագույն փորձ) | Ռեսուրսներ, ներդրումներ, պատաս-խանատվություն | Ժամկետներ[3] | Թիրախ և հաջող իրականացման գնահատման և չափանիշ | Կարգավիճակ/ Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 8.2 | Մշակել և ներդնել պատահական գտածոների ընթացակարգը[7]:<br>Ապահովել, որ դրա իրականացումը վերահսկվի նախագծման և կառուցման կապալառուի մշակութային ժառանգության փորձագետի կողմից և մշտադիտարկվի վերահսկող ինժեների մշակութային ժառանգության մասնագետի կողմից: | Մշակութային ժառանգության պահպանում:<br>Հայտնի մշակութային ժառանգության միավորների վրա ազդեցության ռիսկի նվազեցում: | ՎԶԵԲ ԻՊ8՝ Պատահական գտածոների ընթացակարգ:<br>ՎԶԵԲ-ի ուղղացույցը մշակութային ժառանգության վերաբերյալ (2023):<br>Ազգային պահանջներ: | Նախագծման և կառուցման կապալառու՝ մշակում և իրականացում:<br>Վերահսկող ինժեներ՝ Պատահական գտածոների ընթացակարգի հաստատում: | Շինարարական աշխատանքների մեկնարկից առաջ:<br>Իրականացում՝ հողային աշխատանքների ընթացքում: | Պատահական գտածոների ընթացակարգը մշակված է, հաստատված և արդյունավետորեն իրագործված: | |
| 8.3 | Մշակել, հրապարակել և իրագործել Մշակութային Ժառանգության Կառավարման Պլանում (ՄԺԿՊ) և ԲՍԿՊ-ում նշված մշակութային ժառանգության հետևանքների մեղմացման միջոցառումները, ներառյալ նույնականացված մշակութային ժառանգության վայրերի գրանցումը և օրենքով պահանջվող բոլոր պաշտպանական գործողությունների կիրառումը: | | | ՀՀ ՋԿ (ԾԻԹ կամ Կառույց) Պետական լիազոր մարմնի[8] հետ համագործակցու-թյամբ: | ՄԺԿՊ-ը ավարտված և հրապարակված է շինարարության մեկնարկից առաջ: | ՄԺԿՊ-ը ներկայացված է ՎԶԵԲ-ի հաստատմանը: | ՄԺԿՊ-ները անհրաժեշտ են Քասախի և Աստղաձորի տեղանքների համար: |
| 8.4 | Հավաստել ՄԺԿՊ-ի իրականացումը արտաքին աուդիտի ավարտական հաշվետվությամբ, որը պետք է հաստատվի ՎԶԵԲ-ի կողմից: | | | ՀՀ ՋԿ-ն վարձում է մշակութային ժառանգության փորձագետների: | Շինարարության ժամկետի ավարտից առաջ: | Արտաքին աուդիտի ավարտական հաշվետվությունը մշակված և հաստատված է ՎԶԵԲ-ի կողմից: | ՄԺԿՊ-ները անհրաժեշտ են Քասախի և Աստղաձորի տեղանքների համար: |

[7] ՎԶԵԲ-ի ուղղացույցը մշակութային ժառանգության վերաբերյալ (2023) և Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին ՀՀ օրենք ՀՕ-261 (1998)
[8] Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

| № | Միջոցառում | Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություն/ օգուտներ) | Պահանջներ (իրավական, ՎԶԵԲ ԲՍՊ, լավագույն փորձ) | Ռեսուրսներ, ներդրումներ, պատասխանատվություն | Ժամկետներ[3] | Թիրախ և հաջող իրականացման գնահատման և չափանիշ2 | Կարգավիճակ/ Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Արտաքին աուդիտի ավարտական հաշվետվության մշակման տեխնիկական առաջադրանքը ներկայացնել ՎԶԵԲ-ին: | | | | | | |
| **ԻՊ10 Տեղեկատվության հրապարակում և շահառուների ներգրավվածություն** | | | | | | | |
| 10.1 | Իրագործել Ծրագրի Շահառուների Ներգրավման Պլանը (ՇԿՊ)՝ ապահովելով հրապարակման և տեղեկատվության հասանելիության պարտավորությունների կատարումը:<br>ՇՆՊ-ը պետք է վերանայվի, թարմացվի և կանոնավոր կերպով հրապարակվի՝ անհրաժեշտության դեպքում: | Տեղեկատվության շարունակական տարածում և ներգրավվածություն ազդակիր շահագրգիռ կողմերի հետ:<br>Շահագրգիռ կողմերի և տեղական համայնքների հետ հարաբերությունների բարելավում: | ՎԶԵԲ ԻՊ10:<br>ՎԶԵԲ-ի ուղեցույց ԻՊ 10-ի «Տեղեկատվության հրապարակում և շահագրգիռ կողմերի ներգրավում (2023)" վերաբերյալ: | ՀՀ ՋԿ (ԾԻԹ կամ Կառույց): | Ծրագրի կենսացիկլի ընթացքում: | ՇՆՊ-ը ներդրված է (ապացույցները կարող են տրամադրվել), թարմացված և հրապարակված: | |
| 10.2 | Նշանակել հաղորդակցության / կապի / շահառուների ներգրավման իրավասու մասնագետ, որը պատասխանատու կլինի ՇՆՊ-ի իրագործման համար: | | | ՀՀ ՋԿ (ԾԻԹ կամ Կառույց): | Շինարարական աշխատանքների մեկնարկից առաջ: | ՇՆՊ-ի իրականացման մասնագետը / նշանակված կապի պատասխանատու, որը ուղորդում է ՇՆՊ-ի իրագործումը / կազմում է հաշվետվություններ: | |
| 10.3 | Նշանակել համայնքային կապի պատասխանատուների, որոնք պատասխանատու կլինեն ՇՆՊ-ի իրագործման համար Ծրագրի տեղանքների մակարդակով (ապահովել, որ յուրաքանչյուր ջրամբարի տեղակայման վայրում առնվազն մեկ նման պատասխանատու կին է)՝ ԾԻԹ-ի շահառուների ներգրավման | | | Նախագծման և կառուցման կապալառու: | Շինարարական աշխատանքների մեկնարկից առաջ: | Համայնքային կապի պատասխանատուները նշանակված են, ՇՆՊ-ի իրականացման վերաբերյալ ամսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ ՋԿ: | |

| № | Միջոցառում | Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություն/ օգուտներ) | Պահանջներ (իրավական, ՎՉԵԲ ԲՍՊ, լավագույն փորձ) | Ռեսուրսներ, ներդրումներ, պատասխանատվություն | Ժամկետներ[3] | Թիրախ և հաջող իրականացման գնահատման և չափանիշ2 | Կարգավիճակ/ Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | փորձագետի հսկողության ներքո: | | | | | | |
| 10.4 | Ներդնել և հաղորդակցել համայնքների և արտաքին շահառուների համար բողոքարկման մեխանիզմը՝ համաձայն ՎՉԵԲ-ի պահանջների, ներառյալ, ի թիվս այլոց, անանուն և գաղտնի բողոքարկման ուղիները և դրանց լուծումը:<br>Բողոքարկման մեխանիզմը պետք է ներառի.<br>• Սեռական Բռնության և Ոտնձգության (ՍԲՈ) դեմ պայքարի վերաբերյալ բողոքների գաղտնի հաղորդման ուղիներ,<br>• ՍԲՈ դեմ պայքարին արձագանքելու փորձ ունեցող նշանակված անձնակազմ,<br>• Բողոքատուների և վկաների պաշտպանություն վրեժխնդրությունից կամ անբարենպաստ հետևանքներից և այլն:<br>Բարելավված ԲՄ-ը պետք է հաղորդակցվի աշխատողներին և համայնքներին և լիովին գործառնական դառնա շինարարության մեկնարկից առաջ: | Ապահովել, որ բողոքները հաղորդակցվեն և լուծվեն: | | ՀՀ ՋԿ (ԾԻԹ կամ Կառույց): | Շինարարական աշխատանքների մեկնարկից առաջ և Ծրագրի կենսացիկլի ընթացքում: | Բողոքարկման մեխանիզմը արդյունավետորեն ներդրված և հաղորդակցված է, արդյունքները մշտադիտարկվում են: | |